

# «ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐԵՐ» ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ

Posted on October 4, 2015 by Keghart



Category: [Opinions](#)



**Տոյճ.Սարգիս Ատամ, Գերմանիա, 4 Հոկտեմբեր 2015**

Հայոց օրացոյցի Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսները մշակոյթի ձեռնարկներու ամիսներն են, այս առումով Գերմանիոյ զանազան քաղաքներու մէջ տեղի կ'ունենան Թարգմանչաց տօնին նուիրուած մշակոյթի հարուստ ձեռնարկներ «Հայկական Մշակոյթի Օրեր» անուան տակ:



Այս ձեռնարկները Գերմանիոյ Հայ կեանքին մէջ աւանդութիւն դարձած են: Այս ծիրէն ներս կը ցուցադրուին վաւերագրական եւ պատմական լուսանկարներու երիզներ, ցուցահանդէսներ, կ'իրականան զեկոյցներ, հայկական երաժշտութեան համերգներ, բանախօսութիւններ, գրական երեկոներ եւ կը կազմակերպուին մշակութային զանազան ձեռնարկներ, որոնք հնարաւորութիւն կը ստեղծեն Հայ եւ Գերմանացի հանդիսատեսներուն , աւելի լաւ ծանօթանալ Հայ ժողովուրդի մշակոյթին:

**Տոյճ.Սարգիս Ատամ, Գերմանիա, 4 Հոկտեմբեր 2015**

Հայոց օրացոյցի Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսները մշակոյթի ձեռնարկներու ամիսներն են, այս առումով Գերմանիոյ զանազան քաղաքներու մէջ տեղի կ'ունենան Թարգմանչաց տօնին նուիրուած մշակոյթի հարուստ ձեռնարկներ «Հայկական Մշակոյթի Օրեր» անուան տակ:



Այս ձեռնարկները Գերմանիոյ Հայ կեանքին մէջ աւանդութիւն դարձած են: Այս ծիրէն ներս կը ցուցադրուին վաւերագրական եւ պատմական լուսանկարներու երիզներ, ցուցահանդէսներ, կ'իրականան զեկոյցներ, հայկական երաժշտութեան համերգներ, բանախօսութիւններ, գրական երեկոներ եւ կը կազմակերպուին մշակութային զանազան ձեռնարկներ, որոնք հնարաւորութիւն կը ստեղծեն Հայ եւ Գերմանացի հանդիսատեսներուն , աւելի լաւ ծանօթանալ Հայ ժողովուրդի մշակոյթին:

Այս ձեռնարկներու շարքին առաջինին բացումը կատարուեցաւ 26 Սեպտեմբեր 2015-ին Պեռլինի մէջ՝ Արշակ Զալումեանի ղեկավարութեամբ «Պարի Խումբի» թատերապարի ներկայացումով, «Գերման-Հայ Մշակոյթի Օրեր Պեռլինի Մէջ» անունով, որ կազմակերպուած էր Պեռլինի Գերման-Հայ Մտաւորականներու Միութեան, Պեռլին Քաղաքի Մշակոյթի Պետական Սենեակի, Պեռլինի Հայ Համայնքի, Պեռլինի Գերման Բողոքական Համայնքի եւ Գերմանիոյ Հայոց Առաջնորդութեան համագործակցութեամբ: Ձեռնարկներու այս շարքը պիտի տեւէ մինչեւ 2 Նոյեմբեր 2015 թուականը:

1 Հոկտեմբեր 2015-ին Ֆրանքֆուրթ քաղաքի գեղարուեստի սրահին մէջ տեղի ունեցաւ [Տէնիս Ալլթի](#) Մեծ Եղեռնի ձօնուած «Նկարչական Ցուցահանդէս»ը :



19 Հոկտեմբեր - 31 Հոկտեմբեր 2015 թուականներու միջեւ հարաւային Գերմանիոյ Սթուրթկարտ քաղաքի մէջ տեղի պիտի ունենայ Պատեն-Վիւրթէնպերկ նահանգի հայ համայնքի կողմէ կազմակերպուած 5-րդ աւանդական «Հայկական Մշակոյթի Օրեր Սթուրթկարտի Մէջ» անուան

տակ ձեռնարկներու շարքը, որ 19 Հոկտեմբերին պիտի բացուի Փրօֆ. Սիիրան Տապաղի բանախօսութիւնով եւ Արտակ Կիրակոսեանի, Իսապէլ Մելքոնեանի, Հրայր Աճեմեանի երաժշտութեամբ:

23 Հոկտեմբեր- 20 Նոյեմբեր 2015 թուականներու միջեւ Քէօլն քաղաքի մէջ տեղի պիտի ունենայ Գերմանիոյ Հայոց Առաջնորդութեան կազմակերպած 12-աւանդական «Հայկական Մշակոյթի Օրեր Քէօլնի Մէջ» անունով ձեռնարկներու շարքը, որ պիտի բացուի 23 Հոկտեմբերին հանրածանօթ դաշնակահարուհի Մարինա Շիրինեանի դասական երաժշտութեան դաշնամուրային համերգով:

25 Հոկտեմբերին Քէօլնի մէջ տեղի պիտի ունենայ Գերմանիոյ Գործատերերու Սիութեան կազմակերպած «Հայաստանի Պարի, Երգի Պետական Համոյթի» ներկայացումը:

***Click on any picture to start the slide show of flyers***

